NOUVEL HAY MAGAZINE
SANS FRONTIÈRES

«Կարի հույս» նախաձեռնությունը վերածնում է հայկական տեքստիլի արտադրությունը՝

« Կարի հույս » նախաձեռնությունը վերածնում է հայկական
տեքստիլի արտադրությունը՝ ազգային հայկական նախշերը
դնելով արտադրության մեջ»: »

Խորհրդային Հայաստանի փլուզումից հետո, 1991 թվականին, կորցնելով տնտեսական աջակցությունը սովետական միության կողմից, խորհրդային բոլոր հանրապետություններից Հայաստանը տեխնոլոգիական և արդյունաբերական զարգացման համար ամենաշատ օգնությունը ստացել է Մոսկվայից:

Հայաստանի երկրորդ հանրապետությունից և դրան հաջորդած վարչակարգերից սկսած, մինչև Նիկոլ Փաշինյանի թավշյա հեղափոխությունը, Հայաստանը պայքարել է տեխնոլոգիական և արտադրական սեկտորը զարգացնելու համար:

«Կարի հույս» ընկերությանը հոգեհարազատ է Հայաստանի համար կարևոր այս ոլորտը՝ հայկական տեքստիլի արտադրությունը և նրա ճակատագիրը: Խորհրդային տարիներին Լենինականը (ներկայիս Գյումրի) հայտնի էր որպես «վարպետների քաղաք» , ինչպես նաև հանդիսանում էր հայկական տեքստիլ արդյունաբերության կենտրոնը:

Մ«Կարի հույս» սոցիալական նախաձեռնությունը ստեղծվել է 2020

թվականի 44-օրյա պատերազմի ավարտին, որպեսզի աջակցի արցախցի փախստականներին և պատերազմի այրիներին, հագուստի և տան պարագաների ստեղծման միջոցով իր առջև խնդիր է դրել վերակենդանացնել արդյունաբերության այս ճյուղը և վերագտնել իր արժանի տեղը։

Աշխատելով պատմական փորձագետների հետ, որպեսզի վստահ լինենք հայկական մեծ մշակույթի (և՛ արևմտյան,և արևելյան) նախշերի և գույների բնօրինակության մեջ, հնագույն իրերը թվայնացվեցին և ներդրվեցին «Կարի հույս» ընկերության արտադրության մեջ՝ հասանելի տեսականու, կամ գործվածքի գլանափաթեթի տեսքով։ https://sewinghopearmenia.com/product-category/cloth/.

Աշխատելով թե՛ մասնավոր, և թե՛ պետական հատվածի գործընկերների հետ Հայաստանում և արտերկրում՝ «Կարի հույս»-ը աշխատում է վերակենդանացնել հայկական տեքստիլ արդյունաբերությունը մեծ մասշտաբով, և ստեղծել տեքստիլին հարակից արտադրություններ և աշխատատեղեր,որպեսզի այցելուները գտնեն իրենց համար նոր բացահայտումներ։

Որոշ ստեղծագործություններ

Ներբեռնեք պաշտոնական հաղորդակցությունը ֆրանսերենով ստորև.

Առնչվող հղումներ.

SEWING HOPE ARMENIA
WOMEN HELPING WOMEN